600.0202.10.06.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

10 հունիսի 2020 թվականի №202Ա
քաղ. Երևան

«ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվության ձևերը և դրանց ներկայացման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N103Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություններ) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ն է, սակայն «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի արդյունքներով Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2020 թվականի ապրիլի 29-ին,

գ) Հանձնաժողովը, Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով, 2020 թվականի մայիսի 11-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 11-ի ՈԳԲ/34.4-Մ2-1/1685-20 գրությամբ,

դ) Ընկերությունն իր 2020 թվականի մայիսի 15-ի գրությամբ ընդունել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստը,

ե) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ПО РЕГУЛИРОВАНИЮ ОБЩЕСТВЕННЫХ УСЛУГ РА
PUBLIC SERVICES REGULATORY COMMISSION OF RA
02531594

ք. Երևան
10 հունիսի 2020թ.